

ԴԵԿՈՐԱ-ԳՐՈՒՊ ՍՊԸ

**ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱՆ
ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ղեկավարության հայտարարություն.....	2
2. Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	9
3. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն.....	10
4. Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	12
5. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	13
6. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	15

**ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2020 Թ. ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին, կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե

Կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է Եսկան անորոշությունն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է Եսկան կասկած առաջացնել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է Եսկան անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանն դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կազմակերպության 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները ղեկավարության կողմից հաստատված են 2022 թ. հուլիսի 15-ին:

Ստորագրված է ղեկավարության անունից՝



Գլխավոր տնօրեն _____





«ԵՐԵՎԱՆ-ԱՈՒԴԻՏ ԿՈՆՍԱՒՏ» ՓԲԸ
“YEREVAN - AUDITCONSULT” CJSC

ՀՀ, ք.Երևան, Օրբելի եղբայրների 45,
ԴԱՍԱՌ բիզնես կենտրոն

Հեռ.՝ +374 11 30 03 31
Բջջ.՝ +374 93 25 05 80
info@yerevanaudit.am

www.yerevanaudit.am

YEREVAN-AUDIT
CONSULT

« 15 » հունիսի 2022 թ.

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դեկորա-Գրուպ» ՍՊԸ Ընկերության
Տնօրեն՝ Արմեն Մուրադյանին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Դեկորա-Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցի՝ համապատասխան թվային տվյալների վրա հնարավոր ազդեցության, կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքներն ու դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմք

Քանի որ մենք Ընկերության աուդիտոր ենք նշանակվել 2021թ-ի ընթացքում, մենք հնարավորություն չենք ունեցել այդ ժամանակաշրջանի սկզբում հետևել ֆիզիկական գույքագրմանը կամ այլընտրանքային միջոցներով բավարար տեղեկատվություն ստանալ պաշարների քանակների վերաբերյալ: Ելնելով նրանից, որ պաշարների սկզբնական մնացորդը ազդում է գործառնությունների արդյունքների վրա, մենք հնարավորություն չենք ունեցել որոշելու՝ կա արդյոք 2020թ. գործառնությունների

արդյունքների և կուտակված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտման անհրաժեշտություն:

Մեր աուդիտորական կարծիքը 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխանորեն ձևափոխվել է: Ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը նույնպես ձևափոխված է՝ ընթացիկ ժամանակաշրջանի տվյալների և համապատասխան տվյալների համադրելիության վրա նշված հարցի հնարավոր ազդեցության պատճառով:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն էթիկայի պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ (ՀՄԴ-Վարքագիրք) և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր վերապահումով աուդիտորական կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Լրացուցիչ հանգամանք՝ համադրելի 2019թ. ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատում, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են վերահսկել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության

պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքնելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումների, կամ, եթե այդպիսի բացայատումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերն կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը ներառյալ՝ ներքի հսկողության վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման պատասխանատու՝

«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ

Տնօրեն՝



L. Ղունյան

Որակավորման վկայական թիվ 752

Աուդիտոր՝



L. Սարգսյան

Որակավորման վկայական թիվ 703

«15» հուլիսի 2022թ.



Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծան.	2020թ. հազ. ՀՀ դրամ	2019թ. հազ. ՀՀ դրամ
Հասույթ	4	16,752,916	16,704,790
Վաճառքի ինքնարժեք	5	(11,648,374)	(12,379,363))
Համախառն շահույթ		5,104,542	4,325,427
Իրացման ծախսեր	6	(2,025,571)	(1,994,512)
Վարչական ծախսեր	7	(903,867)	(699,663)
Այլ եկամուտներ	8	106	265,198
Այլ ծախսեր	9	(33,684)	(292,891))
Գործառնական գործունեության արդյունքները		2,141,527	1,603,560
Ֆինանսական եկամուտ և ծախսեր	10	(552,343)	(464,877)
Այլ ոչ գործառնական եկամուտ / ծախս	11	141	(7,223)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունից զուտ բացասական տարբերություն		(564,979)	(585,793)
Շահույթը նախքան հարկումը		1,024,346	545,668
Շահութահարկի գծով ծախս	12	(261,279)	(228,176)
Այլ համապարփակ եկամուտ			
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		763,067	317,491

Տնօրեն _____ Ա. Մուրադյան

Գլխավոր հաշվապահ _____ Վ. Գալստյան

15 Հունիսի 2022թ.



*Բոլոր ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծան.	2020թ. հազ. ՀՀ դրամ	2019թ. հազ. ՀՀ դրամ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	13	1,237,923	1,721,060
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	15	2,867,913	3,292,014
Ոչ նյութական ակտիվներ	14	2,989	4,778
Երկարաժամկետ փոխառություններ		629,826	576,903
Հետաձգված հարկային ակտիվներ	12	14,320	12,680
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		4,752,971	5,607,435
Ընթացիկ ակտիվներ			
Հումք և նյութեր		458,554	260,760
Պատրաստի արտադրանք		595,051	562,749
Ապրանքներ պահեստում		11,919,006	8,940,950
Այլ պաշարներ			
Տրված կանխավճարներ	16	154,268	148,826
Դրամական միջոցներ		3,620,362	2,391,459
Դրամական միջոցներ	17	161,552	93,397
Ընթացիկ հարկային վճարների գծով ակտիվներ		37,797	13,364
Առևտրային այլ դեբիտորական պարտքեր		523,292	509,625
Կարճաժամկետ փոխառություններ		195,620	177,395
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		17,665,500	13,098,525
Ընդամենը ակտիվներ		22,418,472	18,705,960
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		100,052	50
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ			
Զբաղիված շահույթ/(վնաս)		1,855,549	1,092,481
Եմիսիոն եկամուտ			
Սեփական կապիտալի այլ տարրեր			
Ընդամենը սեփական կապիտալ		1,955,601	1,092,531
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Տոկոսային վարկեր և փոխառություններ	18	8,532,494	6,728,312
Զօգտագործված արձակուրդի պահուստ		69,819	60,709
Դատական վեճերի գծով պահուստ	23	2,691	2,691
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ			
Գործառնական վարձակալության գծով պարտավորություն		1,843,277	2,087,609
Ֆինանսական վարձակալության՝ լիզինգի գծով պարտավորություն		0	60,890
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		10,448,280	8,940,211
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17	1,519,407	1,772,933
Ստացված կանխավճարներ		188,202	156,254
Տոկոսային վարկեր և փոխառություններ	18	7,076,789	5,041,080
Չկրած տոկոսային ծախսեր		421,229	556,648
Ընթացիկ հարկային և այլ պարտավորություններ		245,607	232,551
Ֆինանսական վարձակալության՝ լիզինգի գծով պարտավորություն		67,737	353,130
Գործառնական վարձակալության գծով պարտավորություն		495,621	560,623
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		10,014,591	8,673,218
Ընդամենը պարտավորություններ		20,462,871	17,613,429
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		22,418,472	18,705,960

Տնօրեն _____



Գլխավոր հաշվապահ _____



*Բոլոր ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Կանոնադրական կապիտալ հազ. ՀՀ դրամ	Չբաշխված շահույթ հազ. ՀՀ դրամ	Էմիսիոն եկամուտ հազ. ՀՀ դրամ	Վերագնահատու միջևկեր աչափու միջտարբերություններ հազ. ՀՀ դրամ	Ընդամենը հազ. ՀՀ դրամ
Մնացորդը առ 01 հունվարի 2019թ.	50	774,990	0	0	775,040
Շահույթ/(վնաս)		317,491			317,491
Հայտարարված շահաբաժին		0			0
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	50	1,092,481	0	0	1,092,531
Շահույթ/(վնաս)		763,067			763,067
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր				0	
Կանոնադրական կապիտալի համալրում	100,002				100,002
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	100,052	1,855,549	0	0	1,955,601

*Բոլոր Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	2020թ. հազ. ՀՀ դրամ	2019թ. հազ. ՀՀ դրամ
Գործառնական գործունեություն		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցների մուտքեր	19,527,592	19,113,048
Այլ գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	0	0
Մատակարարներին վճարումներ	(15,790,050)	(15,675,498)
Վշխատակիցներին վճարումներ	(1,336,848)	(1,112,606)
Այլ գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր	0	0
Վճարված հարկեր, տուրքեր	(3,475,622)	(3,310,628)
Վճարված շահութահարկ	(287,814)	(169,719)
Տոկոսային ծախս գործառնական վարձակալության գծով	51,409	17,067
Չուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	(1,311,333)	(1,138,336)
Ներդրումային գործունեություն		
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից	106	265,613
Մուտքեր կանոնադրական կապիտալի համալրումից	100,002	0
Հիմնական միջոցների ձեռքբերում	(810,000)	(450,994)
Չուտ դրամական միջոցների հոսքեր օգտագործված ներդրումային գործունեությունում	(709,892)	(185,380)
Ֆինանսական գործունեություն		
Վարկերի և տոկոսների մարումից դրամական միջոցների ելքեր	(19,574,769)	(18,800,179)
Վարկերի ստացումից դրամական միջոցների մուտքեր	20,077,942	20,124,059
Գործառնական վարձակալության գծով մայր գումարների մարումներ	(730,681)	(489,945)
Գործառնական վարձակալության գծով տոկոսագումարների մարումներ	(51,409)	(17,067)
Փոխառության ստացումից դրամական միջոցների մուտքեր	2,768,880	2,080,788
Փոխառության մարումից դրամական միջոցների ելքեր	(196,025)	(1,548,273)
Ապահովագրական հատուցումներից մուտքեր	3,700	6,676
Ապահովագրական ծախսերից ելքեր	(80,324)	(17,594)
Այլ ֆինանսական մուտքեր	604	417
Բանկային ծախս	(89,330)	(89,509)
Չուտ դրամական միջոցների հոսքեր ստացված/ (օգտառոծմած) ֆինանսական գործունեությունում	2,128,588	1,249,373
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ ան/ (նվազում)	107,363	(74,344)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցներին և նրանց համարժեքներին	(39,208)	(49,836)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	93,397	217,577

Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31
դեկտեմբերի

161,552

93,397

*Բոլոր ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող
ծանոթագրությունների հետ մեկտեղ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Տեղեկատվություն ընկերության մասին

Դեկորա-Գրուպ ՍՊԸ-ն (այսուհետ Ընկերություն) շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 26.10.2006թ.-ին:

Ընկերության գտնվելու վայրն է ՀՀ, ք. Երևան, Արարատյան 90/9ա:

Ընկերության հիմնական գործունեության տեսակներն են.

ա) Ներքնակի արտադրություն, ներքնակների և անկողնային պարագաների վաճառք

բ) Կահույքի արտադրություն և վաճառք

գ) Շինանյութի և շինարարական պարագաների, սալիկների, ԴՍԴ-ների, լամինատե հատակների վաճառք

2020թ. Ընկերության աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 581 մարդ, իսկ 2019թ-ին՝ 547 մարդ:

1. ՀԱՇՎԱԴԱՅԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԶԱՆԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) համաձայն:

Պատրաստման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության հիման վրա, որ Կազմակերպությունը գործում է անընդհատության հիմունքով, քանի որ ունի բավարար ռեսուրսներ՝ իր գործունեությունը տեսանելի ապագայում շարունակելու համար:

Ամբողջ ֆինանսական տվյալները ներկայացված են հազար ՀՀ դրամով (այսուհետ՝ հազար դրամ), եթե այլ բան նշված չէ:

Կազմակերպությունը իր հաշվապահական հաշվառումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համաձայն: ՖՀՄՍ համաձայն, Կազմակերպությունը իրականացրել է ճշգրտումներ և վերադասակարգումներ սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման նպատակով:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա: Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք գինը ուղղակիորեն դիտարկելի է կամ

գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս՝ Կազմակերպությունը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության բնութագրերը, եթե շուկայի մասնակիցները այդ բնութագրերը հաշվի կառնեին չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս:

Բացի այդ, ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից իրական արժեքով չափումները դասակարգվում են երեք մակարդակի՝ հիմք ընդունելով իրական արժեքով չափումների ընթացքում օգտագործված ելակետային տվյալների դիտարկելիության աստիճանը և իրական արժեքի ամբողջությամբ չափման ժամանակ օգտագործված տվյալների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

- Մակարդակ 1՝ նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված),
- Մակարդակ 2՝ մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն կամ անուղղակիորեն, և
- Մակարդակ 3՝ ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա:

Այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնք պարբերաբար ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում, Ընկերությունը որոշում է, թե արդյոք հիերարխիայի մակարդակների միջև եղել են տեղափոխություններ՝ նորից գնահատելով դրանց դասակարգումը (ելևելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Սկզբնական ճանաչումը

Ճանաչման ամսաթիվ

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները ճանաչվում են գործարքի ամսաթվով (այն ամսաթիվը, երբ Ընկերությունը հանձն է առնում ձեռք բերել ակտիվը կամ պարտավորությունը): Կանոնավոր են համարվում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի և պարտավորության մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում:

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին կախված է պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով, և գործարքի ծախսերը նվազեցվում կամ ավելացվում են տվյալ գումարին, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման տեսակներ

Ընկերությունը իր բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգում է՝ ելնելով ակտիվների կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից, չափում և իրականացնելով՝

- ▶ ամորտիզացված արժեքով,
- ▶ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով,
- ▶ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Որպեսզի ֆինանսական ակտիվը դասակարգվի և չափվի ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, անհրաժեշտ է, որ վերջինս առաջացնի դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են (SPPI): Այս գնահատումը կոչվում է SPPI թեստ և կատարվում է գործիքի մակարդակով: Ֆինանսական ակտիվները, որոնց դրամական հոսքերը, բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն չեն, դասակարգվում և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով անկախ բիզնես մոդելից:

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հետագա չափումներն իրականացվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և ենթակա են արժեզրկման գնահատման: Օգուտներն ու վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ ակտիվը ապաճանաչվում է, ենթարկվում է փոփոխությունների կամ արժեզրկվում է: Ընկերության՝ ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ժամկետային ավանդները բանկերում, դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, վարձակալության գծով պարտավորությունները:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույն կերպով արտացոլում է գործունեության նպատակների իրագործման համար ֆինանսական ակտիվների խմբերի կառավարման ուղղությամբ որդեգրած մեթոդները:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամիտ ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու վատագույն կամ սթրեսային սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերը տեղի են ունենում Ընկերության սկզբնական ակնկալիքներից տարբեր կերպով, Ընկերությունը չի փոխում տվյալ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հետագայի համար հաշվի է առնում այդ տեղեկատվությունը՝ նոր առաջացող կամ նոր ձեռք բերվող ֆինանսական ակտիվները գնահատելիս:

Բացառապես մայր գումարի և տոկոսի վճարման (SPPI) գնահատումներ

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ՝ Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են SPPI գնահատման պահանջներին:

Այս գնահատման նպատակով, մայր գումարի հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման ժամանակ և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե կան մայր գումարի մարումներ կամ վարձատրության/զեղչի ամորտիզացիա):

Վարկային պարտավորվածության մեջ սովորաբար տոկոսի ամենակարևոր տարրերն են փողի ժամանակային արժեքը և վարկային ռիսկը: SPPI գնահատումը իրականացնելու համար Ընկերությունը կիրառում է դատողություն և հաշվի է առնում համապատասխան գործոններ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվի արժույթը և տոկոսադրույքի գործողության ժամանակահատվածը:

Համեմատության համար, այն պայմանագրային դրույթները, որոնք առաջացնում են ավելի քան նվազագույն ենթարկվածություն ռիսկերին կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի տատանողականության, որոնք կապված չեն հիմնական վարկային պայմանագրի հետ, չեն առաջացնում բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսացող պայմանագրային դրամական միջոցների հոսքեր: Այս դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ և պարտավորությունների վերադասակարգում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները, բացառությամբ բացառիկ դեպքերի, երբ Ընկերությունը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Փոփոխություններ \$ՀՄՍ 7, \$ՀՄՍ 9 և ՀՀՄՍ 39 ստանդարտներում՝ Տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխում

- \$ՀՄՍ 9 և ՀՀՄՍ 39 ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը-ի փոփոխությունները նախատեսում են մի շարք մեղմացումներ, որոնք կիրառելի են հեջավորման բոլոր փոխհարաբերությունների համար, որոնց վրա տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխումն ուղղակի ազդեցություն ունի: Բարեփոխումն ազդում է հեջավորման փոխհարաբերությունների վրա, եթե այն առաջացնում է անորոշություն հեջավորված հոդվածի կամ հեջավորման գործիքի՝ ուղենիշի վրա հիմնված դրամական հոսքերի ժամկետների կամ գումարի վերաբերյալ: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Ընկերությունը չունի տոկոսադրույքի հեջավորման որևէ փոխհարաբերություն:
- Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ 8-ում «Էականության» սահմանում

- Փոփոխությունները ապահովում են էականության նոր սահմանում, որը նշում է, որ Տեղեկատվությունը էական է, եթե խելամտորեն ակնկալվում է, որ դրա բացթողումը, սխալ ներկայացումը կամ խեղաթյուրումը կարող է ազդել հիմնական օգտագործողների՝ հաշվետու կազմակերպության մասին ֆինանսական տեղեկատվություն տրամադրող ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող որոշումների վրա:
- Փոփոխությունները պարզաբանում են, որ էականությունը կախված կլինի ֆինանսական հաշվետվությունների համատեքստում տեղեկատվության էությունից կամ ծավալից՝ առանձին վերցրած, կամ այլ տեղեկատվության հետ համատեղ: Տեղեկատվության սխալ ներկայացումը էական է, եթե խելամտորեն ակնկալվում է, որ այն կարող է ազդել հիմնական օգտագործողների որոշումների վրա: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, և որևէ ապագա ազդեցություն Ընկերության համար չի ակնկալվում:
- Փոփոխություններ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներ»-ում՝ թողարկված 2018թ. մարտի 29-ին
- Հայեցակարգային հիմունքները ստանդարտ չէ, և դրանում ներառված ոչ մի հիմունք չի կարող գերակայել որևէ ստանդարտում ներառված հասկացությունների կամ պահանջների նկատմամբ: Հայեցակարգային հիմունքների նպատակն է ստանդարտների մշակման գործում աջակցել ՀՀՄՍԽ-ին, օգնել պատրաստողներին՝ մշակելու հաշվապահական հաշվառման հետևողական քաղաքականություններ, երբ առկա չեն կիրառելի ստանդարտներ, և աջակցել բոլոր կողմերին հասկանալու և մեկնաբանելու ստանդարտները:

Վերանայված Հայեցակարգային հիմունքները ներառում են նոր հասկացություններ, ակտիվների և պարտավորությունների թարմացված սահմանումներ ու ճանաչման չափանիշներ, և պարզաբանում է որոշ կարևոր հասկացություններ: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Գործառնական արժույթ

- Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն հիմնական տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Կազմակերպությունը իրականացնում է իր գործունեությունը (գործառնական արժույթ): Կազմակերպության գործառնական արժույթը ՀՀ դրամն է (այսուհետ՝ դրամ): Դրամը նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է:
- Բոլոր արժեքները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

Հասույթի ճանաչում

Հասույթը ճանաչվում է այն չափով, որքանով հավանական է, որ ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և այդ հասույթը կարելի է արժանահավատորեն չափել՝ անկախ այն փաստից, թե երբ է վճարումը կատարվել: Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով պայմանագրով սահմանված վճարման պայմանները և բացառելով հարկերն ու տուրքերը:

Ծառայությունների մատուցում

Հասույթը ճանաչվում է այն չափով, որքանով հավանական է, որ ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և այդ հասույթը կարելի է արժանահավատորեն չափել: Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ բացառելով գեղչերը, նվազեցումները ու վաճառքի հետ կապված հարկերը: Ընկերությունն այս հարկերը դիտարկում է որպես հարկային մարմինների անունից հավաքագրվող հարկ:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե դա չի պահանջվում կամ թույլատրվում որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ և հստակ բացահայտված չէ Կազմակերպության հաշվապահական քաղաքականության մեջ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Հաշվապահական հաշվառման ներկայացված քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորությունները չափվում են չգեղչված հիմունքով և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել կարճաժամկետ դրամական պարգևավճարների տեսքով, եթե Կազմակերպությունը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք մատուցված աշխատակցի կողմից և պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել:

Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ֆինանսական եկամուտը ներառում է բանկային ավանդների և ընթացիկ հաշիվների գծով տոկոսային եկամուտը: Ֆինանսական եկամուտը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքներում հաշվեգրվելուն պես՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արտարժույթով գործարքներ

Կազմակերպության գործառնական արժույթից տարբեր այլ արժույթներով (արտարժույթով) կատարված գործարքները ճանաչվում են Կազմակերպության համապատասխան գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործառնականություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում գործառնական արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու

ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված գործառնական արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը:

Պատմական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում՝ դրանց առաջացման ամսում:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից առաջացած օգուտներն ու վնասները ներառվում են զուտ հիմքուքով՝ որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից՝ արդյոք արտարժույթի շարժերը զուտ օգուտի կամ զուտ վնասի դիրքում են:

Հարկում

Կազմակերպությունը հարկվում է շահութահարկով և ԱԱՀ-ով :

Գործունեության հետ կապված հարկեր.

Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են այլ հարկատեսակներ ևս, որոնք գնահատվում են ելնելով կազմակերպության գործունեությունից: Այս հարկերը ներառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես գործառնական ծախսերի բաղադրիչ:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են պատմական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, եթե այդպիսիք կան:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսերը: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսումները, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը, ինչպես նաև կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագրերը, որոնք հանդիսանում են համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում են որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցների տարրը ապաճանաչվում է այն օտարելիս կամ, երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրս բերումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի ապաճանաչումից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում զուտ հիմունքով համապարփակ ֆինանսական արդյունքում՝ «այլ եկամուտ»/«այլ ծախսեր» հոդվածում:

Հետագա ծախսումներ. հիմնական միջոցների բաղկացուցիչ փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Կազմակերպություն կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցիչ հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսերը ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում դրանց առաջանալուն պես:

Մաշվածություն. հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման համար պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման համար պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Մաշվածությունը հաշվարկվում է հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի վրա և նախատեսված է դուրս գրելու ակտիվների արժեքը դրանց օգտակար ծառայության վերջում: Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճշգրիտ է արտացոլում ակտիվի օգտագործման հետ կապված ապագա տնտեսական օգուտների ստացման մոդելը:

Գնահատված օգտակար ծառայության ժամկետները, մնացորդային արժեքները և մաշվածության մեթոդները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ բոլոր տեսակի գնահատումներում փոփոխությունների ազդեցությունը հաշվառելով առաջընթաց սկզբունքով: Ստորև ներկայացված են հիմնական միջոցների խոշոր միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար՝

- Կապիտալացված ծախսումներ 20 տարի
- Կառուցվածքներ 5-8 տարի
- Փոխանցող հարմարանքներ 5-8 տարի
- Մեքենաներ և սարքավորումներ 5-8 տարի
- Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ 5-8 տարի
- Այլ հիմնական միջոցներ 5-8 տարի
- Տրանսպորտային միջոցներ 8 տարի
- Համակարգչային տեխնիկա 1 տարի

Պայմանական պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, սակայն բացահայտվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, սակայն դրանք բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, թղթակցային հաշիվների մնացորդները, որոնց մարման նախնական ժամկետը չի գերազանցում 90 օրը, կարճ ժամկետում կարող են փոխարկվել կանխիկի և ծանրաբեռնված չեն պայմանագրային պարտավորություններով:

Վարձակալություն

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը կիրառում է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Ընկերությունը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար, և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք ներկայացնում են հիմքում ընկած ակտիվները օգտագործելու իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կդառնա վարձակալի կողմից օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները և ճշգրտված վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները: Բացառությամբ, եթե Ընկերությունը խելամոռրեն համոզված է, որ ձեռք կբերի վարձակալված ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը պայմանագրի ավարտին, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվի և վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ենթակա են արժեզրկման գնահատման:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Ընկերությունը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումները (ներառյալ՝ ըստ Էուլայան հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսումները, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և գումարները, որոնք ակնկալվում է, որ կվճարվեն վարձակալի կողմից մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, երբ Ընկերությունը խելամոռրեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Ընկերության՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Փոփոխուն վարձավճարներ, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը:

Վարձավճարների ներկա արժեքը հաշվելիս Ընկերությունը օգտագործում է սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ըստ Էուլայան հաստատուն

վարձավճարների փոփոխություն կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն:

Կարճաժամկետ վարձակալություններ

Ընկերությունը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և որոնք չեն պարունակում գնման օպցիոն):

Կարճաժամկետ վարձակալությունների գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

Արժեզրկում

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ. ֆինանսական ակտիվները, բացի շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջին գնահատվում են արժեզրկման հայտանիշների հայտնաբերման նպատակով: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե առկա է օբյեկտիվ վկայություն այն մասին, որ ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքեր կարող են ազդեցություն ունենալ ներդրման գծով գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող են համարվել հետևյալ հայտանիշները.

- թողարկողի կամ պայմանագրային կողմի զգալի ֆինանսական դժվարությունները, կամ
- պայմանագրի խախտումը, մասնավորապես տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը, կամ
- փոխառուի կողմից սնանկության կամ ֆինանսական վերակազմակերպման գործընթացի հավանականությունը, կամ
- ֆինանսական դժվարությունների արդյունքում տվյալ ֆինանսական ակտիվի գծով ակտիվ շուկայի անհետացումը:

Ֆինանսական ակտիվների որոշ կատեգորիաների համար, ինչպիսիք են առևտրային դեբիտորական պարտքերը, ակտիվները, որոնք ըստ գնահատականների առանձին արժեզրկված չեն, ի լրումն գնահատվում են նաև խմբային արժեզրկման տեսանկյունից:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման գծով ծախսի գումարն իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունը՝ զեղչված ֆինանսական ակտիվի համար սկզբնապես սահմանված տոկոսադրույքով:

Ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով անմիջականորեն բոլոր ակտիվների գծով, բացառությամբ վարկերի և դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստային հաշվի միջոցով: Երբ ակտիվը կամ դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի, այն դուրս է գրվում պահուստային հաշվի միջոցով: Հետագայում դուրս գրված գումարների վերականգնումը կատարվում է դրանք պահուստային հաշվին կրեդիտագրելու միջոցով: Պահուստային հաշվի հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում:

Ոչ ֆինանսական ակտիվներ. Կազմակերպության ոչ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է

որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա գնահատվում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը:

Ակտիվի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը գեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են այն դեպքում, երբ Կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի և պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների), համապատասխանաբար ավելացվում կամ նվազեցվում են ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքից, սկզբնական ճանաչման պահին: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում:

Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները հաշվանցվում են պարտավորություններով և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են զուտ մնացորդով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք և գոյություն ունի դրանք զուտ հիմքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն: Հաշվանցում կատարելու իրավունքը չպետք է պայմանավորված լինի ապագա ժամանակաշրջանի դեպքերով և պետք է ունենա իրավական ուժ ստորև ներկայացված բոլոր դեպքերում՝

- ▶ բնականոն գործունեության ընթացքում,
- ▶ պարտականությունների չկատարման (դեֆոլտի) դեպքում, և
- ▶ կազմակերպության և բոլոր գործընկերների վճարունակ չլինելու կամ սևանկության դեպքում:

Սույն պայմանները, որպես կանոն, չեն բավարարվում հաշվանցման գլխավոր համաձայնություններում, և համապատասխան ակտիվներն ու պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են համախառն արժեքով:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչումը

Ֆինանսական ակտիվը (կամ, կիրառելիության դեպքում, ֆինանսական ակտիվի մի մասը կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է, Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրով, ինչպես նաև, Ընկերությունը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, ո՛չ փոխանցել, և ո՛չ էլ պահպանել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը, ակտիվը ճանաչվում է այնքանով, որքանով Ընկերությունը շարունակում է մասնակցություն ունենալ տվյալ ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և փոխհատուցման առավելագույն գումար, որը կարող է պահանջվել Ընկերությունից:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված և/կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ դրամական միջոցներով մարվող օպցիոնները կամ նմանատիպ գործիքները), Ընկերության մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Ընկերությունը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով վաճառված օպցիոնի (ներառյալ դրամական միջոցներով մարվող օպցիոնները կամ նմանատիպ գործիքները), Ընկերության շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

Դուրս գրումը

Ֆինանսական ակտիվները մասամբ կամ ամբողջությամբ դուրս են գրվում միայն այն ժամանակ, երբ Ընկերությունը դադարեցրել է վերականգնման նպատակ հետապնդելը: Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորուստների պահուստը, տարբերությունը նախ ավելացվում է պահուստին, որն այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ: Բոլոր հետագա վերականգնումները հաշվանցվում են վարկային կորուստներից ծախսերի հետ: Դուրսգրումը հանդիսանում է ապաճանաչման դեպք:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչումը (շարունակություն)

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում է, չեղյալ է համարվում կամ լրանում է դրա գործողության ժամկետը:

Եթե նույն վարկատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբեր են՝ նախորդի համեմատ, կամ գոյություն ունեցող պարտավորության պայմաններն էականորեն փոփոխված են, նման փոխարինումը կամ փոփոխությունը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը արտացոլվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվների բոլոր կանոնավոր ձեռքբերումները և վաճառքը ճանաչվում և ապաճանաչվում է գործարքի կատարման ամսաթվի դրությամբ: Կանոնավոր ձեռքբերումը և վաճառքը ֆինանսական ակտիվների այն ձեռքբերումը և վաճառքն են, որոնք պահանջում են ակտիվների մատակարարումը վերահսկողության կամ շուկայի կողմից սահմանված ժամկետներում: Բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները այնուհետև գնահատվում են կամ ամորտիզացված արժեքով, կամ իրական արժեքով՝ կախված ֆինանսական ակտիվների դասակարգումից:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

Պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով.

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է պահպանել ֆինանսական ակտիվները պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հավաքագրման նպատակով, և
- Ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները որոշակի օրերին արաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Հետևյալ պայմաններին համապատասխանող պարտքային գործիքները հետագայում չափվում են համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով.

- Ֆինանսական ակտիվը, որը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը և վաճառել ֆինանսական ակտիվները, և
- Ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները որոշակի օրերին արաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Մնացած բոլոր ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Չնայած վերոնշյալին՝ Կազմակերպությունը ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ կարող է կատարել չհակադարձվող ընտրություն/դասակարգում:

- Կազմակերպությունը կարող է մշտական հիմունքներով որոշել ներկայացնել այլ համապարփակ եկամուտում սեփական կապիտալի ներդրման իրական արժեքի հետագա փոփոխությունները՝ որոշակի չափանիշների պահպանման դեպքում, և
- Կազմակերպությունը կարող է մշտական հիմունքներով դասակարգել պարտքային գործիքը, որը չափվում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, ինչպես չափվել է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով, եթե այն վերացնում կամ զգալիորեն նվազեցնում է հաշվապահական հաշվառման անհամապատասխանատվությունը:

Ամորտիզացված արժեքը և արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը.

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակաշրջանում պարտքային գործիքի ամորտիզացված արժեքի հաշվարկի և տոկոսային եկամտի բաշխման մեթոդ:

Ֆինանսական ակտիվների համար՝ բացառությամբ վարկային գծով գնված կամ ի սկզբանե արժեզրկված բերված ակտիվների (օրինակ այն ակտիվները, որոնք վարկային գծով արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ) արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն գեղչում է ապագա գնահատված կանխիկի ստացումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարզապահարներ կամ գեղչեր)՝ բացառությամբ ակնկալվող վարկային կորուստները պարտքային գործիքի ակնկալվող գործողության ժամանակաշրջանի ողջ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակաշրջանում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին: Գնված կամ ի սկզբանե արժեզրկված վարկային գծով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար վարկային գծով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է՝ գեղչելով ապագա գնահատված դրամական հոսքերը՝ այդ թվում նաև ակնկալվող վարկային կորուստները, մինչև պարտքային գործիքի ամորտիզացված արժեքը սկզբնական ճանաչման ժամանակ:

Ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը այն գումարն է, որով գնահատվում է ֆինանսական ակտիվը սկզբնական ճանաչման ժամանակ՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կուտակված ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ սկզբնական և ներկա արժեքի միջև ցանկացած տարբերության դեպքում՝ ճշգրտված ցանկացած կորստի գծով պահուստի չափով:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը պարտքային գործիքների համար, որոնք այնուհետև չափվում են ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով: Ֆինանսական ակտիվների համար՝ բացառությամբ գնված կամ ի սկզբանե արժեզրկված կամ ձեռք բերված ֆինանսական ակտիվների, տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի համար՝ բացառությամբ այն ֆինանսական ակտիվների, որոնք այնուհետև վարկային գծով արժեզրկվում են: Հետագայում վարկային գծով արժեզրկված ֆինանսական ակտիվների

համար տոկոսային եկամուտը ճանաչվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ՝ ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի մասով: Եթե հետագա հաշվետու ժամանակաշրջաններում վարկային գծով արժեզրկված ֆինանսական գործիքի վարկային ռիսկը բարելավվում է այնքան, որ ֆինանսական ակտիվն այլևս չի հանդիսանում վարկային գծով արժեզրկված, տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը՝ ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի գծով:

Գնված կամ ի սկզբանե արժեզրկված վարկային գծով ֆինանսական ակտիվների համար Կազմակերպությունը ճանաչում է տոկոսային եկամուտ՝ կիրառելով վարկային գծով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ ֆինանսական ակտիվի՝ սկզբնական ճանաչման ժամանակ ամորտիզացված արժեքի գծով: Այս հաշվարկը չի վերադարձվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ֆինանսական ակտիվի վարկային ռիսկը հետագայում բարելավվում է այնքան, որ ֆինանսական ակտիվը այլևս վարկային գծով չի արժեզրկվում:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ կորուստում և ներառված է «ֆինանսական եկամուտ-տոկոսային եկամուտ» հոդվածում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ֆինանսական ակտիվների բոլոր տեսակների համար արժեզրկումից կորուստների չափումը պահանջում է դատողություն, մասնավորապես՝ արժեզրկումից կորուստները որոշելիս ապագա դրամական հոսքերի գումարի և ժամանակի և գրավի արժեքների, ինչպես նաև վարկային ռիսկի զգալի աճի գնահատումը: Այս գնահատումները պայմանավորված են բազմաթիվ գործոններով, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստի տարբեր մակարդակների: Ընկերության ԱՎԿ հաշվարկը փոփոխական ելակետային տվյալների ընտրությանը և դրանց փոխկապակցվածությանը վերաբերող ենթադրություններով բարդ մոդելների արդյունք է: ԱՎԿ մոդելի տարրերը, որոնք համարվում են հաշվապահական դատողություններ և գնահատումներ, ներառում են՝

▶ վարկային գնահատման մոդել, որը անհատական դասերին վերագրում է դեֆոլտի հավանականություն (PD),

▶ Ընկերության կողմից վարկային ռիսկի զգալի աճի գնահատման չափորոշիչներ և հետևաբար,

Ֆինանսական ակտիվների գծով պահուստի չափումը պետք է լինի LTECL-ի հիմունքով, և որակական գնահատումը:

Վարձակալություններ- լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի գնահատում

Ընկերությունը չի կարող հեշտությամբ որոշել վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, հետևաբար վարձակալության գծով պարտավորությունը չափելիս կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը (IBR): Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը այն տոկոսադրույքն է, որը Ընկերությունը ստիպված կլինի վճարել համանման ժամկետով և համանման ապահովմամբ այն փոխառու միջոցների դիմաց, որոնք անհրաժեշտ են համանման տնտեսական միջավայրում համանման արժեք ունեցող օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ձեռքբերման համար: Հետևաբար, լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը արտացոլում է այն գումարը, որը Ընկերությանը պետք կլինի վճարել, ինչը պահանջում է գնահատումների կիրառում, երբ

չկան դիտարկելի տոկոսադրույքներ կամ երբ անհրաժեշտ է կատարել ճշգրտումներ՝ վարձակալության ժամկետները և պայմանները արտացոլելու համար:

Ընկերությունը գնահատում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ օգտագործելով դիտարկելի ելակետային տվյալներ (ինչպիսիք են օրինակ՝ շուկայական տոկոսադրույքները), եթե հասանելի են, և պետք է կատարի կազմակերպությանը բնորոշ որոշակի գնահատումներ:

2. ՆՈՐ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2020թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև.

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2020թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2020թ., որևէ Էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները,
- «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ՖՀՄՍ 3 փոփոխություններ
- «Էականության սահմանումը» ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 փոփոխություններ,
- «Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում» ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ,
- «COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ» ՖՀՄՍ 16 փոփոխություններ

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները Էական ազդեցություն չեն ունենա ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2) (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)

- ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր»
- Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)
- Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)
- Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսեր (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)
- 2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ)
- Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)

3. ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՅՆԱԿԱՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԸ

Կազմակերպության հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս՝ Կազմակերպության ղեկավարությանն անհրաժեշտ է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումները և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին, կամ փոփոխությունը ճանաչվում է փոփոխության և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

4. Հասույթ

	2020թ.	2019թ.
	հազ. ՀՀդրամ	հազ. ՀՀդրամ
Արտադրանքի վաճառքից հասույթ	2,304,985	2,458,011
Ապրանքի վաճառքից հասույթ	14,408,859	14,211,961
Ծառայության մատուցումից հասույթ	0	1,073
Աշխատանքների կատարումից հասույթ	39,072	33,745
Ընդամենը	16,752,916	16,704,790

5. Ինքնարժեք

	2020թ.	2019թ.
	հազ. ՀՀդրամ	հազ. ՀՀդրամ
Վաճառված արտադրանքի ինքնարժեք	1,630,265	1,853,469
Վաճառված ապրանքի ինքնարժեք	10,018,108	10,525,895
Ընդամենը	11,648,374	12,379,363

6. Իրացման ծախսեր

	2020թ. հազ. ՀՀդրամ	2019թ. հազ. ՀՀդրամ
Աշխատանքի վճարման ծախսեր, սոցիալ. ապահովագր. վճարներ	1,129,236	1,011,480
Հիմ. միջ մաշվածություն	63,030	71,306
Պահեստում գտնվող արտադրանքի, ապրանքների փաթեթավորման, տարայի, տեսակավորման, պահպանման ծախսեր	15,310	9,321
Արտադրանքի, ապրանքների իրացման տրանսպորտային և ապահովության ծախսեր	41,737	105,377
Մարկետինգի և գովազդի ծախսեր	190,584	292,978
Իրացման այլ ծախսեր	29,051	18,105
Վաճառատրահների վարձավճար	556,623	485,945
Ընդամենը իրացման ծախսեր	2,025,571	1,994,512

7. Վարչական ծախսեր

	2020թ. հազ. ՀՀդրամ	2019թ. հազ. ՀՀդրամ
Աշխատանքի վճարման ծախսեր, սոցիալ. ապահովագր. վճարներ	285,352	181,051
Հիմնական միջոցների մաշվածության դրանց նորոգման և սպասարկման գծով ծախսեր	172,508	146,202
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	2,118	34,083
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	12,137	13,279
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	159,111	161,318
Առդիտորական և խորհրդատվական ծախսեր	6,936	4,511
Բանկային ծառայությունների ծախսեր, ապահովության ծախսեր	119,316	114,238
Վարչական այլ ծախսեր	146,388	44,981
Ընդամենը վարչական ծախսեր	903,867	699,663

8. Այլ եկամուտներ

	2020թ. հազ. ՀՀդրամ	2019թ. հազ. ՀՀդրամ
Հիմնական միջոցների օտարումից եկամուտներ	106	265,198
Ընդամենը այլ եկամուտներ	106	265,198

9. Այլ ծախսեր

	2020թ. հազ. ՀՀդրամ	2019թ. հազ. ՀՀդրամ
Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր	5,133	9,794
Գործառնական այլ ծախսեր	28,445	2,467
Հիմնական միջոցների օտարումից ծախսեր	106	280,630
Ընդամենը այլ ծախսեր	33,684	292,891

10. Ֆինանսական ծախսեր/եկամուտներ

	2020թ. հազ. ՀՀդրամ	2019թ. հազ. ՀՀդրամ
Ապահովագրական հատուցումից եկամուտ	3,700	6,676
Ցպահանջ ավանդներից եկամուտ	604	417
Տոկոսային ծախս վարկերից	(556,647)	(449,072)

Տոկոսային ծախս ֆինանսական վարձակալությամբ ստացած հիմնական միջոցներից
Ընդամենը ֆինանսական ծախսեր

0	(22,897)
(552,343)	(464,877)

11. Այլ ոչ գործառնական ծախսեր/եկամուտ

	2020թ. հազ. ԶԶդրամ	2019թ. հազ. ԶԶդրամ
Կրեդիտորական պարտքերի դուրսգրումից առաջացած եկամուտ	7,267	4,179
Դեբիտորական պարտքերի դուրսգրումից առաջացած ծախս	(6,369)	(11,402)
Անհատույց տրված ակտիվների գծով ծախս	(757)	
Ընդամենը այլ եկամուտներ	141	(7,223)

12. Շահութահարկ

	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն		Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	
	2020 հազ. ԶԶ դրամ	2019 հազ. ԶԶ դրամ	2020 հազ. ԶԶ դրամ	2019 հազ. ԶԶ դրամ
Աշխատավարձի պահուստ	69,819	60,709	1,640	5,083.14
Դատական վեճերի գծով պահուստ	2,691	2,691		538.12
Հետաձգված հարկային ծախս/ (եկամուտ)			1,640	5,621

2020 և 2019թթ. Դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների շահութահարկի գծով ծախսի տարրերն են.

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

	2020թ. հազ. ԶԶդրամ	2019թ. հազ. ԶԶդրամ
Ընթացիկ շահութահարկ		
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	(262,918)	(233,797)
Նախորդ տարվա ընթացիկ շահութահարկի գծով ճշգրտումներ		
Հետաձգված հարկ		
Ժամանակավոր տարբերությունների առաջացմանը կամ հակադարձմանը վերաբերող	1,640	5,621
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված շահութահարկի գծով ծախս	(261,279)	(228,176)

2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների շահութահարկի գծով ծախսի և Հայաստանի Հանրապետությունում գործող հարկային դրույքաչափով բազմապատկված հաշվապահական շահույթի միջև համեմատությունը ներկայացված է ստորև.

	2020թ. հազ. ԶԶդրամ	2019թ. հազ. ԶԶդրամ
Ընկերության գործունեությունից հաշվապահական շահույթ նախքան հարկումը	763,067	317,491
Հայաստանի Հանրապետությունում սահմանված դրույքաչափի 2019թ. (20%), 2020թ. (18 %)	(262,918)	(233,797)
Շահութահարկի նպատակով չնվազեցվող ծախսեր	1,640	5,621

13. Հիմնական միջոցներ

	Շենքեր, շինություններ	Կառուցվածքներ	Մեքենաներ, սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտարական գույք տնտեսական գործիքներ	Հաշվողական տեխնիկա և այլ հիմնական միջոցներ	Հողամասեր	Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ	Ընդամենը
	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Սկզբնական արժեք									
Մնացորդը առ 01.01.19	704226	22235	88466	137412		1192610	38414	16427	2199848
Ավելացումներ			334891	165948	2477	1159136	67340	834971	2564764
Նվազեցում			97	132890		1157441		655262	1945690
Մնացորդը առ 31.12.19	704226	22235	423260	170530	2477	1194305	105754	196135	2818923
Ավելացումներ		23671	408149	16210	14858	134343	430958	1663700	2691888
Նվազեցում			4938	957		29411		1349172	1384478
Մնացորդը առ 31.12.20	704226	45906	826471	185783	17335	1299238	536712	510663	4126333
Մաշվածություն									
Մնացորդը առ 01.01.19	245469	482	7813	129066		810433			1193263
Տարվա մաշվածություն	23474	1112	30692	4034	60	54618			113989
Մաշվածության դուրսգրում									
Մնացորդը առ 31.12.19	268943	1594	38504	133100	60	865050			1307252
Տարվա մաշվածություն	23474	1112	226347	4753	923	91998			348606
Մաշվածության դուրսգրում			17740						17740
Մնացորդը առ 31.12.20	292417	2706	282591	137853	983	957048			1673598
Հաշվեկշռային արժեք									
Առ 01.01.19	458757	21753	80653	8346		382177	38414	16427	1006527
Առ 31.12.19	435283	20641	384756	37430	2417	329255	105754	196135	1511671
Առ 31.12.20	411809	43200	543880	47930	16352	342190	536712	510663	2452735

Կազմակերպությունում առկա են զրոյական արժեքով հիմնական միջոցներ, որոնց սկզբնական արժեքը կազմում է 1,114,961 հազար ՀՀ դրամ:

14. Ոչ նյութական ակտիվներ

	Լիցենզիաներ, արտոնագրեր	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Սկզբնական արժեք			
Մնացորդը առ 01.01.19		13,118	13,118
ՈՆԱ ձեռքբերում		0	0
ՈՆԱ դուրսգրում		0	0
Մնացորդը առ 31.12.19		13,118	13,118
ՈՆԱ ձեռքբերում		0	0
ՈՆԱ դուրսգրում		0	0
Մնացորդը առ 31.12.20		13,118	13,118
Մաշվածություն			
Մնացորդը առ 01.01.19		6,552	6,552
Ամորտիզացիայի ծախս		1,789	1,789
Ամորտիզացիայի դուրսգրում			
Մնացորդը առ 31.12.19		8,340	8,340
Ամորտիզացիայի ծախս		1,789	1,789
Ամորտիզացիայի դուրսգրում			
Մնացորդը առ 31.12.20		10,129	10,129
Հաշվեկշռային արժեք			
Առ 01.01.19		6,566	6,566
Առ 31.12.19		4,778	4,778
Առ 31.12.20		2,989	2,989

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը սահմանված է 8 տարի:

15. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

	Ֆինանսական վարձակալություն	գործառնական վարձակալություն	Ընդամենը
	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Սկզբնական արժեք			
Մնացորդը առ 01.01.19	567,218	3,121,110	3,688,328
օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ավելացում	210,000	0	210,000
օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ծախսագրում		(472,878)	(472,878)
Մնացորդը առ 31.12.19	777,218	2,648,232	3,425,450
օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ավելացում		199,879	199,879

օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ծախսագրում		(509,214)	(509,214)
Մնացորդը առ 31.12.20	777,218	2,338,898	3,116,115
Մաշվածություն			
Մնացորդը առ 01.01.19	59,660		59,660
Ամորտիզացիայի ծախս	73,776		73,776
Ամորտիզացիայի դուրսգրում			
Մնացորդը առ 31.12.19	133,436		133,436
Ամորտիզացիայի ծախս	114,767		114,767
Ամորտիզացիայի դուրսգրում			
Մնացորդը առ 31.12.20	248,203		248,203
Հաշվեկշռային արժեք			
Առ 01.01.19	507,558	3,121,110	3,628,668
Առ 31.12.19	643,782	2,648,232	3,292,014
Առ 31.12.20	529,015	2,338,898	2,867,913

16. Այլ պաշարներ

	2020թ.	2019թ.
	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Վառելիք	75	0
Պահեստամասեր	0	54
Շինանյութ	115,882	117,157
Այլ նյութեր	34,275	27,579
Արտադրանքի գծով անավարտ արտադրություն	4,036	4,036
Ընդամենը այլ պաշարներ	154,268	148,826

17. Դրամական միջոցներ

	2020թ.		2019թ.	
	հազ. ՀՀ դրամ	Արտարժույթով արտահայտված/դրամ	հազ. ՀՀ դրամ	Արտարժույթով արտահայտված/դրամ
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում AMD	95,982		45,387	
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում USD	440	843	87	182
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում EUR	159	248	928	1,728
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում RUB	188	26,821	9	1,111
Դրամական միջոցներ դրամարկղում	16,792		28,659	
Դրամական միջոցներ ճանապարհին	47,990		18,327	
Ընդամենը դրամական միջոցներ	161,552		93,397	

18. Վարկեր

	2020թ.		2019թ.	
	հազ. ՀՀ դրամ	Արտարժույթով արտահայտված/դրամ	հազ. ՀՀ դրամ	Արտարժույթով արտահայտված/դրամ
Վարկեր բանկերում AMD	1,123,315		526,274	
Որից կարճաժամկետ մաս	917,107		526,274	

Վարկեր բանկերում USD	3,815,324	7,300,797	3,631,968	7,571,332
Որից կարճաժամկետ մաս	2,926,921		2,307,723	
Վարկեր բանկերում EUR	4,204,786	6,558,603	2,740,637	5,101,138
Որից կարճաժամկետ մաս	3,232,761		2,207,083	
Ընդամենը Վարկեր	9,143,425		6,898,880	

17. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2020թ.	2019թ.
	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Կրեդիտորական պարտք գնումների գծով	653,475	919,472
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին աշխատավարձի գծով	127,739	115,056
Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով	5,444	9,574
Կրեդիտորական պարտքեր շահաբաժինների գծով	725,917	725,917
Այլ ընթացիկ պարտավորություններ	6,832	2,914
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,519,407	1,772,933

19. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռիսկերի կառավարումը հանդիսանում է Կազմակերպության գործունեության հիմնարար գործոն և կարևոր տարր: Կազմակերպության գործունեությունը ենթակա է ֆինանսական գործիքների օգտագործումից հետևյալ հիմնական ռիսկերի՝

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Կազմակերպության ենթարկվածության մասին, ռիսկերի գնահատման և կառավարման հետ կապված Կազմակերպության նպատակները, քաղաքականությունը և գործընթացները: Այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումները:

Ռիսկի կառավարման հիմունքներ. Բաժնետերերի ընդհանուր ժողովը պատասխանատվություն է կրում Կազմակերպության ռիսկերի կառավարման համակարգի ստեղծման և վերահսկողության համար: Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության ռիսկերի կառավարման քաղաքականությունների մշակման և վերահսկման համար: Ղեկավարությունը կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներկայացնում Բաժնետերերի ընդհանուր ժողովին կատարած աշխատանքի վերաբերյալ:

Կազմակերպության ռիսկի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունն ու ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման

փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Կազմակերպությունը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ կպատկերացնեն իրենց դերերը և պարտականությունները: Կազմակերպությունը կառավարում է իր ծախսումները և զուտ ակտիվները՝ իր գործունեության շարունակականության կարողությունն ապահովելու և միևնույն ժամանակ՝ իրագործելով իր նպատակները ծախսերի օպտիմալացման միջոցով: Կազմակերպության կողմից իր ռիսկերի չափման եղանակներում փոփոխություններ տեղի չեն ունեցել, ինչպես նաև չեն փոփոխվել ռիսկերի ենթարկվածությունը կամ դրանց կառավարման և չափման մեթոդները:

(ա) Պարտքային ռիսկ. Կազմակերպությունը ենթակա է պարտքային ռիսկի, որն իրենից ներկայացնում է ֆինանսական վնաս կրելու ռիսկ այն դեպքում, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտավորությունները: Կազմակերպությանն հիմնականում բնորոշ է պարտքային ռիսկը հաշվետու ամսաթվի դրությամբ բանկային հաշիվների մնացորդներում առկա դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով:

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին. ռիսկի առավելագույն չափն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը: Պարտքային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ հետևյալն է՝

	2020 թ. դեկտեմբերի 31-ի	2019 թ. դեկտեմբերի 31-ի
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	161,552	93,397

Վերոնշյալ աղյուսակում նշված ակտիվները գտնվում են տեղական բանկերից մի քանիսում: Վերը նշված աղյուսակում ներկայացված բոլոր ակտիվները տեղակայված են Հայաստանի Հանրապետությունում:

(բ) Իրացվելիության ռիսկ. Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Կազմակերպությունը կունենա իր ֆինանսական պարտավորությունների կատարման դժվարություններ՝ դրանց ժամկետը լրանալիս: Կազմակերպության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է՝ մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե՛ սովորական, թե՛ արտասովոր պայմաններում՝ առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Կազմակերպության համբավը վտանգի ենթարկելու:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը ըստ նրանց հաշվեկշռային արժեքների և պայմանագրով սահմանված ժամկետայնության:

2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
Մինչև 1 տարի	1 տարուց ավել	Ընդամենը

Ակտիվներ			
Հիմնական միջոցներ		1,237,923	1,237,923
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ		2,867,913	2,867,913
Ոչ նյութական ակտիվներ		2,989	2,989
Հետաձգված հարկային ակտիվ		14,320	14,320
Պաշարներ	13,122,842	4,036	13,126,878
Կանխավճարներ	3,620,362		3,620,362
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	523,292		523,292
Դրամական միջոցներ	161,552		161,552
Ընթացիկ հարկային վճարների գծով ակտիվներ	37,797		37,797
Տրված փոխառություններ	195,620	629,826	825,446
Ընդամենը ակտիվներ	17,661,465	4,757,007	22,418,472
Պարտավորություններ			
Տոկոսային վարկեր և փոխառություններ	7,076,789	8,532,494	15,609,283
Պահուստներ		72,509	72,509
Գործառնական վարձակալության գծով պարտավորություն	495,621	1,843,277	2,338,898
Լիզինգի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս	67,737		67,737
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,519,407		1,519,407
Ստացված կանխավճարներ	188,202		188,202
Չկրած տոկոսային ծախսեր	421,229		421,229
Ընթացիկ հարկային և այլ պարտավորություններ	245,607		245,607
Ընդամենը պարտավորություններ	10,014,591	10,448,280	20,462,871
Զուտ դիրք	7,646,874	-5,691,273	
Կուտակային զուտ դիրք	1,955,601		

(գ) **Շուկայական ռիսկ.** շուկայական ռիսկը Կազմակերպության եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքների և տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն

ընդունելի սահմաններում միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արժութային ռիսկ. արժութային ռիսկը սահմանվում է որպես ֆինանսական գործիքի արժեքի տատանման ռիսկ՝ արտարժութային փոխարժեքների փոփոխությունների արդյունքում: Կազմակերպության գործունեությունը ծավալվում է հիմնականում Հայաստանում և, որպես այդպիսին, Կազմակերպության գործառնությունների զգալի մասը տեղի է ունենում տեղական արժույթով՝ ՀՀ դրամով:

Կազմակերպության ֆինանսական վիճակը և դրամական հոսքերը ենթակա են արտարժույթի գործող փոխարժեքի տատանումների ազդեցության ռիսկին:

Արտարժութային ռիսկի զգայունություն. ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Կազմակերպության զգայունությունը ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% աճի կամ նվազման հանդեպ: Տվյալ 10%-ն իրենից ներկայացնում է այն զգայունության տոկոսը, որն օգտագործվում է արտարժութային ռիսկը հիմնական ղեկավար անձնակազմին ներկայացնելիս և իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր փոփոխությունն ըստ ղեկավարության գնահատականի: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով գնանշված դրամային հոդվածները և ճշգրտում է դրանց փոխարկումը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ արտարժույթի փոխարժեքների 10% տարբերության տեսանկյունից: Ստորև նշված դրական թիվը ներկայացնում է նախքան շահութահարկով հարկումը շահույթի և վնասի կամ զուտ ակտիվների աճ ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի 10% արժեզրկման դեպքում: ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի 10% արժևորման համապատասխան ազդեցություն կունենար շահույթի և վնասի կամ զուտ ակտիվների վրա, և մնացորդը կլիներ բացասական:

	2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Հազ. ՀՀ դրամ	Հազ. ՀՀ դրամ
	Շահույթ և վնաս/	Շահույթ և վնաս/
	Զուտ ակտիվներ	Զուտ ակտիվներ
ՀՀ դրամի 10% արժեզրկում Դոլարի նկատմամբ (2020թ.՝ 10%)	-627,772	-592,001
ՀՀ դրամի 10% արժևորում Դոլարի նկատմամբ (2020թ.՝10%)	627,772	592,001
ՀՀ դրամի 10% արժեզրկում Եվրոյի նկատմամբ (2020թ.՝ 10%)	-424,241	-320,494
ՀՀ դրամի 10% արժևորում Եվրոյի նկատմամբ (2020թ.՝10%)	424,241	320,494
ՀՀ դրամի 10% արժեզրկում Ռուբլու նկատմամբ (2020թ.՝ 10%)	-10,207	-2,611
ՀՀ դրամի 10% արժևորում Ռուբլու նկատմամբ (2020թ.՝10%)	10,207	2,611

Վերևում բերված աղյուսակում ներկայացված է առանցքային ենթադրության փոփոխության ազդեցությունը այլ ենթադրությունների անփոփոխ պայմանների դեպքում: Իրականում ենթադրությունների, ինչպես նաև այլ գործոնների միջև գոյություն ունի փոխադարձ կապ: Հարկ է նաև նշել, որ այս զգայունությունները ոչ գծային են, և ավելի մեծ կամ փոքր ազդեցությունները չպետք է միջարկվեն (ինտերպոլյացիա) կամարտարկվեն (էքստրապոլյացիա) այս արդյունքներից:

Տոկոսադրույքի ռիսկ. Կազմակերպության գնահատմամբ այն չի ենթարկվում տոկոսադրույքի ռիսկի, քանի որ ստացված վարկերի գծով տոկոսները ֆիքսված են և կապիտալի միջազգային շուկայում էական փոփոխությունների դեպքում ենթակա չեն վերանայման:

20. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՋՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՋԸ

ՖՀՄՍ-ն սահմանում է իրական արժեքը որպես գին, որը կստացվեր ակտիվը վաճառելիս կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի ընթացքում: Այստեղ ներկայացված գնահատումները կարող են բնութագրական չլինել Կազմակերպության կողմից որոշակի գործիքի ամբողջական տնօրինումը շուկայում փոխարկման արդյունքում իրացնելիս Կազմակերպության կողմից ստացվելիք գումարների առումով:

Այնուամենայնիվ, գնահատված իրական արժեքը որոշելու համար անհրաժեշտ է կիրառել դատողություն: Հայաստանի Հանրապետությունը շարունակում է կրել զարգացող շուկայի որոշ բնութագրեր և տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկայում գործառնությունների ծավալները: Շուկայական գնանշումները կարող են արդիական չլինել կամ արտացոլել արտասովոր իրացման գործարքներ, հետևաբար՝ չներկայացնել ֆինանսական գործիքների իրական արժեքները: Ղեկավարությունը օգտագործել է շուկայում առկա ողջ հասանելի տեղեկատվությունը՝ ֆինանսական ակտիվների իրական արժեքները գնահատելու համար:

Իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի համեմատություն. հաշվի առնելով մի շարք ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ բնույթը, ղեկավարությունը կարծում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտ են իրենց իրական արժեքին:

21. ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվի առնելով Կազմակերպության գործառնությունների բնույթը, Կազմակերպությունը չունի ձևակերպված կապիտալի կառավարման քաղաքականություն: Կազմակերպության նկատմամբ կիրառելի չեն կապիտալի կառավարման արտաքին պահանջներ: Կազմակերպության կողմից կրթական, սոցիալական և մշակութային ծրագրերի ֆինանսավորումը մեծապես պայմանավորված է տվյալ տարում նվիրատվություններից ստացված եկամտից: Ղեկավարության կարծիքով, Կազմակերպությունը մինչ այսօր հնարավորություն է ունեցել համալրել բավարար միջոցներ և չի ակնկալում այդ նվիրատվությունների էական նվազում կամ կրճատում տեսանելի ապագայում:

22. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրավական գործընթացներ. Կազմակերպությունը չի ունեցել այնպիսի իրավական խնդիրներ, որոնք կարող են զգալի ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական վիճակի վրա:

Ղատական վարույթներ. Կազմակերպությունը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներգրավված է եղել ղատական վարույթներում (2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ևս ներգրավված է եղել ղատական վարույթում): Ֆինանսական հաշվետվություններում այդ գծով ստեղծվել է պահուստ 2,691.0 հազար ՀՀ դրամ **ԵՇՂ/3519/02/17 Աշխատանքի վերականգնելու և գումարի բռնագանձման պահանջի** մասին վարույթի շրջանակներում:

Կից ներկայացնում ենք Տեղեկություններ Դեկորա-Գրուպ ՍՊԸ մասնակցությամբ 15.07.2022թ դրությամբ առկա ղատական գործերի վերաբերյալ:

	Ղատական գործի համար/ղատական գործով ներկայացված պահանջը	Ղատական գործին ներգրավված կողմերը	Ղատական գործի ընթացիկ վիճակը	Պահանջի չափը և նկարագրությունը
1	ՎԴ/6899/05/15 (12.10.2015թ. թիվ 2709 որոշումն անվավեր ճանաչելու մասին)	Դեկորա-Գրուպ ՍՊԸ ընկնում Երևանի քաղաքապետարանի	Հայաստանի Հանրապետության վարչական դատարան	9,260,533 ՀՀ դրամ աղբահանության վճար և 1,793,368 ՀՀ դրամ տույժ
2	ԵՇՂ/3519/02/17 Աշխատանքի վերականգնելու և գումարի բռնագանձման պահանջի մասին	Մոնիկա Չաքմազյան ընդդեմ Դեկորա-Գրուպ ՍՊԸ	Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	1,458,600 ՀՀ դրամ որպես աշխատավարձ և 1,232,000 ՀՀ դրամ տուժանք
3	ՎԴ/7744/05/19 06.06.2019 թիվ Վ-21/47 որոշումը վերցնելու պ/մ	Դեկորա-Գրուպ ՍՊԸ ընկնում Երևանի քաղաքապետարանի	ՀՀ վերաքննիչ վարչական դատական վարույթ	100,000 ՀՀ դրամ
4	ՎԴ/7744/05/19 21.08.2019թ. թիվ Վ-32/26 որոշումը վերացնելու պ/մ	Դեկորա-Գրուպ ՍՊԸ ընկնում Երևանի քաղաքապետարանի	ՀՀ վերաքննիչ վարչական դատական վարույթ	100,000 ՀՀ դրամ

5	ՎԴ/11268/05/19 06.11.2019թ. թիվ Վ-42/25 որոշումը վերացնելու պ/մ	Դեկորա-Գրուպ ՍՊԸ ընկղեմ Երևանի քաղաքապետարանի	ՀՀ վերաքննիչ վարչական դատական վարույթ	100,000 ՀՀ դրամ
6	ՎԴ/0587/05/20 14.10.2019թ. թիվ ԸԶ/ԱՀ007719 որոշումը վերացնելու պ/մ	Դեկորա-Գրուպ ՍՊԸ ընկղեմ Երևան քաղաքի Զանաքեռ-Չեյթուն վարչական շրջանի	ՀՀ վճռաբեկ դատարան	1,705,173 ՀՀ դրամ
7	ՎԴ/7185/05/20 05.05.2020թ. թիվ 155-Ա որոշումը վերացնելու պ/մ	Դեկորա-Գրուպ ՍՊԸ ընկղեմ ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողով	ՀՀ վճռաբեկ դատարան	5,093,058 ՀՀ դրամ
8	ԵԴ/0177/01/18 Դիտավորությամբ յուրացման եղանակով հափշտակել է ՍՊԸ պատկանող առանձնապես խոշոր չափերով գույքը	Դեկորա-Գրուպ ՍՊԸ ընկղեմ Աշոտ Արարատի Դանիելյանի	ՀՀ ԵՐԼԱՆ քաղաքի դատարան	40,116,553.83 ՀՀ դրամ

Հարկեր

Հայաստանի Հանրապետության առևտրային համակարգը կարգավորող օրենսդրությունը, ներառյալ հարկային օրենսդրությունը, կարող է ունենալ մեկից ավելի մեկնաբանություններ: Ավելին, վտանգ կա, որ հարկային մարմինները կամայական դատողություններ կարող են կիրառել ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ: Եթե Կազմակերպության գործունեության վերաբերյալ ղեկավարության որոշակի որոշումներ հարկային մարմինների կողմից վիճարկվեն, Կազմակերպությունը կարող է ենթարկվել հավելյալ հարկերի, տույժերի և տոկոսների:

Գործարար միջավայրը

Հայաստանը դեռևս գտնվում է տնտեսական և քաղաքական փոփոխությունների գործընթացում: Որպես զարգացող շուկա, Հայաստանը չունի այն աստիճան զարգացած գործարար և կանոնակարգային ենթակառուցվածք, որը բնորոշ է ավելի հասուն ազատ շուկայական տնտեսություններին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական

խոչընդոտ են հանդիսանում տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակը և տնտեսավարման կենտրոնացվածությունը, տարածաշրջանային անկայունությունները և միջազգային տնտեսական ճգնաժամը: Ի լրումն, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների գործունեության ծավալները, ինչը թերևս չի արտացոլում ֆինանսական գործիքների արժեքները: ՀՀ ապագա տնտեսական ուղղվածությունը մեծապես կախված է կառավարության կողմից ձեռնարկված տնտեսական, ֆինանսական և դրամավարկային միջոցառումներից, ինչպես նաև հարկային, իրավական, կանոնակարգային և քաղաքական զարգացումներից:

Հայաստանը շարունակում է ենթարկվել տնտեսական և քաղաքական փոփոխությունների: Որպես զարգացող շուկա, Հայաստանը չունի այն աստիճանի զարգացած գործարար և կանոնակարգային ենթակառուցվածք, որը բնորոշ է ավելի հասուն ազատ շուկայական տնտեսություններին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտ են հանդիսանում տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակը և տնտեսավարման կենտրոնացվածությունը, տարածաշրջանային անկայունությունները և միջազգային տնտեսական ճգնաժամը:

Բացի այդ 2020թ. սկզբին Նոր կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19) սկսեց արագ տարածվել ամբողջ աշխարհով՝ հանգեցնելով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից 2020թ. մարտ ամսին համաճարակային կարգավիճակի մասին հայտարարմանը: Նոր կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխելու համար շատ երկրների կողմից ձեռնարկված պատասխան միջոցները հանգեցնում են մի շարք ընկերությունների համար զգալի գործառնական գործունեությունների խափանումների և եական ազդեցություն են ունենում համաշխարհային ֆինանսական շուկաների վրա: Զանի որ իրավիճակն արագ զարգանում է, այն կարող է զգալի ազդեցություն ունենալ մի շարք ոլորտների շատ ընկերությունների ձեռնարկությունների վրա՝ ներառյալ, բայց չսահմանափակելով ձեռնարկությունների գործունեությունների խափանմանը՝ որպես արտադրության խափանման կամ ձեռնարկությունների փակման, մատակարարման շղթայի ընդհատման, անձնակազմի կարանտինի մեջ գտնվելու, նվազած պահանջարկի և ֆինանսավորման գծով առաջացած դժվարությունների արդյունք: Ավելին, Ֆոնդը կարող է կրել Նոր կորոնավիրուսային հիվանդության անհամեմատ զգալի ազդեցությունը համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա վերջինիս ունեցած բացասական ազդեցության հետևանքով: Ֆոնդի վրա Նոր կորոնավիրուսային հիվանդության ազդեցության չափը մեծապես պայմանավորված է աշխարհի և Հայաստանի տնտեսության վրա համաճարակի ազդեցությունների մակարդակով և տևողությամբ:

Այնուամենայնիվ, քանի որ նման անորոշությունների հիմքում ընկած են բազմաթիվ փոփոխական պայմաններ և ենթադրություններ, ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում հնարավոր ճշգրտումների ազդեցությունը, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե վերը նշված գործոնների ազդեցությունը Հայաստանի Հանրապետության վրա դառնար դիտարկելի և արժանահավատորեն չափելի:

23. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական գնանշման վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են ոչ կապակցված կողմերի հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Կազմակերպության կառավարման մարմիններն են Բաժնետերերի ընդհանուր ժողովը և ընկերության տնօրենը: Ընկերությունը մայր, դուստր, ասոցացված կազմակերպություն չունի և չի վերահսկվում /այդ թվում նշանակալից ազդեցության/ այլ կազմակերպության կողմից:

Բաժնեմասի 50.0009 տոկոսը պատկանում է ՀՀ քաղաքացի Արմեն Մուրադյանին, իսկ մյուս 49.999 տոկոսը՝ ՀՀ քաղաքացի Արման Ասլանյանին:

Ստորև ներկայացնում ենք 2019-2020թթ կատարված գործարքները փոխկապակցված անձանց հետ:

	Սթարլ	Կամ	Բիլյալ	Տեխնոտ	Դյուսոն	Ասլանյ	Մուրա
	այն	Դեվելոփ				ան	
	ՍՊԸ	մենթս	ն ՍՊԸ	ուն ՍՊԸ	Կրաստա	Ինվես	դյան
	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	ն ՍՊԸ	տ ՍՊԸ	Արմեն
					հազ. ՀՀ դրամ		հազ. ՀՀ դրամ
Գնումների գծով Դեբիտորական պարտքի մնացորդը առ 01.01.19	84.0	16,859	-	-	43,754	-	143,286
Գնումների գծով Դեբիտորական պարտքի ավելացում	2,755	1,933	3,140	-	188,894	143,286	-
Գնումների գծով Դեբիտորական պարտքի մարում	-	3,000	3,140	-	164,666	143,286	-
Մնացորդը առ 31.12.19	2,839	15,791	-	-	67,981	-	143,286
Գնումների գծով Դեբիտորական պարտքի ավելացում	32,812	29,545	874	622	150,828	-	-
Գնումների գծով Դեբիտորական պարտքի մարում	-	8,115	874	622	144,546	-	-
Մնացորդը առ 31.12.20	35,650	37,221	-	-	74,264	-	143,286

Տրված Փոխառություն

Մնացորդը առ 01.01.19

Փոխառության ավելացում

Փոխառության մարում

Մնացորդը առ 31.12.19

Փոխառության ավելացում

Փոխառության մարում

Մնացորդը առ 31.12.20

Սթարլայն ՍՊԸ

հազ. ՀՀ դրամ

Էկոսպան ՓԲԸ

հազ. ՀՀ դրամ

	67,196	5,963
	-	123
	-	173
	67,196	5,913
	-	872
	-	343
	67,196	6,442

Աշխատավարձ

Մնացորդը առ 01.01.19

Հաշվեգրված աշխատավարձ վճարում

Մնացորդը առ 31.12.19

Հաշվեգրված աշխատավարձ վճարում

Մնացորդը առ 31.12.20

Մուրադյան Արմեն

հազ. ՀՀ դրամ

	249
	5,229
	4,969
	509
	7,185
	7,195
	499

Ստացված կանխավճար

Մնացորդը առ 01.01.19

Կանխավճարի ավելացում

Կանխավճարի մարում

Մնացորդը առ 31.12.19

Կանխավճարի ավելացում

Կանխավճարի մարում

Մնացորդը առ 31.12.20

Բիպլան ՍՊԸ

հազ. ՀՀ դրամ

	0
	189
	189
	0
	-
	-
	-

Ասլանյան Արման

Մուրադյան Արմեն

	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Ստացված Փոխառություն		
Մնացորդը առ 01.01.19	585,299	3,975,450
Փոխառության ավելացում	125,000	2,067,297
Փոխառության մարում	601,766	1,280,767
Մնացորդը առ 31.12.19	108,533	4,761,980
Փոխառության ավելացում	-	3,087,524
Փոխառության մարում	63,000	1,429,179
Մնացորդը առ 31.12.20	45,533	6,420,325

	Էկզուսպան	Հոքա թրեյդինգ	Հովհաննես	Գոռ
	ՓԲԸ	ՍՊԸ	Զամայան ԱԶ	Ներսիսյան ԱԶ
	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Գնումների գծով կրեդիտորական պարտք մնացորդը առ 01.01.19			-	
Կրեդիտորական պարտքի ավելացում		2,624,711		
Կրեդիտորական պարտքի մարում		2,624,711		
Մնացորդը առ 31.12.19	-	-	-	-
Կրեդիտորական պարտքի ավելացում	17,100	2,377,255	5,000	37,492
Կրեդիտորական պարտքի մարում	17,100	2,377,255	3,000	30,955
Մնացորդը առ 31.12.20	-	-	2,000,000	6,537

	Ասլանյան Արման	Մուրադյան Արմեն
	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Շահաբաժինների գծով կրեդիտորական պարտք մնացորդը առ 01.01.19	363,684	362,232
Կրեդիտորական պարտքի ավելացում	-	-
Կրեդիտորական պարտքի մարում	-	-
Մնացորդը առ 31.12.19	363,684	362,232
Կրեդիտորական պարտքի ավելացում	-	-
Կրեդիտորական պարտքի մարում	-	-

Մուրադյան Արմեն

հազ. ՀՀ դրամ

Առհաշիվ գումարիների գծով կրեդիտորական պարտք մնացորդը առ 01.01.19

-

Կրեդիտորական պարտքի ավելացում

85,639

Կրեդիտորական պարտքի մարում

85,639

Մնացորդը առ 31.12.19

-

Կրեդիտորական պարտքի ավելացում

32,301

Կրեդիտորական պարտքի մարում

32,301

Մնացորդը առ 31.12.20

-

24. Հետագա դեպքեր

- Ընկերության ղեկավարության համար Նոր կորոնավիրուսային հիվանդությունը (COVID-19) դադարել է հանդիսանալ էական անորոշություն:
- 2021թ.-ի ընթացքում կազմակերպությունը հայտարարել է ընդամենը 300,156,003 ՀՀ դրամ շահույթի բաշխման որոշման վերաբերյալ:
- 2021թ.-ին ընկերությունը կատարել է կանոնադրական կապիտալի համալրում 15,007,800 ՀՀ դրամի չափով: